ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM

Համարը	N 1496-Ն	*Տեսակը*	Հիմնական
Տիպը	Որոշում	*Կարգավիճակը*	Գործում է
Սկզբնաղբյուրը	Միասնական կայք 2024.09.16-2024.09.29 Պաշտոնական հրապարակման օրը 20.09.2024	*Ընդունման վայրը*	Երևան
Ընդունող մարմինը	ՀՀ կառավարություն	*Ընդունման ամսաթիվը*	19.09.2024
Ստորագրող մարմինը	ՀՀ վարչապետ	*Ստորագրման ամսաթիվը*	20.09.2024
Վավերացնող մարմինը		*Վավերացման ամսաթիվը*	
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	01.01.2025	*Ուժը կորցնելու ամսաթիվը*	

Ծանուցում

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 1-ից:

Կապեր այլ փաստաթղթերի հետ

Փոփոխողներ և ինկորպորացիաներ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՊԱՀՈՒՍՏՈՒՄ ՆԵՐԱՌՎՈՂ ԴԵՂԵՐԻ ԵՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԻ ԱՆՎԱՆԱՑԱՆԿԸ, ԿՈՒՏԱԿՄԱՆ ՆՈՐՄԵՐՆ ՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 2144-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 սեպտեմբերի 2024 թվականի N 1496-Ն

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՊԱՀՈՒՍՏՈՒՄ ՆԵՐԱՌՎՈՂ ԴԵՂԵՐԻ ԵՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԻ ԱՆՎԱՆԱՑԱՆԿԸ, ԿՈՒՏԱԿՄԱՆ ՆՈՐՄԵՐՆ ՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 2144-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նյութական պահուստի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Սահմանել՝

1) ռազմավարական պաշարների պահուստում ներառվող դեղերի և բժշկական նշանակության գույքի անվանացանկը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) ռազմավարական պաշարների պահուստում ներառվող դեղերի և բժշկական նշանակության գույքի կուտակման նորմերն ու ժամանակացույցը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Սույն որոշումը տարածվում է հետևյալ կազմակերպությունների վրա (այսուհետ՝ կազմակերպություններ)՝

1) Հայաստանի Հանրապետություն դեղեր և բժշկական նշանակության գույք ներմուծող այն կազմակերպությունների վրա, որոնց նախորդ տարվա դեղերի ներմուծման ծավալը, գումարային արտահայտությամբ, կազմում է առնվազն 500 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամ.

2) թմրամիջոցներ և հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր պարունակող դեղեր Հայաստանի Հանրապետություն ներմուծող կազմակերպությունների վրա, որոնց նախորդ տարվա դեղերի ներմուծման ծավալը կազմում է առնվազն 300 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Նախորդ տարվա գնման պայմանագրերի շրջանակներում ներմուծված և մատակարարված դեղերի ու բժշկական նշանակության ապրանքների ընդհանուր քանակը նվազեցվում է գնման պետական պայմանագրերի շրջանակներում

մատակարարված քանակի չափով:

4. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարին՝

1) մինչև յուրաքանչյուր տարվա մարտի 10-ը Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե ներկայացնել Հայաստանի Հանրապետությունում թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած՝ դրանց պրեկուրսորների արտահանում, ներմուծում և մեծածախ առևտուր իրականացնելու լիցենզիա ունեցող կազմակերպությունների ցանկը.

2) սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանվող դեղերի և բժշկական նշանակության գույքի անվանացանկը ենթակա է վերանայման ըստ անհրաժեշտության:

5. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահին՝

1) մինչև յուրաքանչյուր տարվա մարտի 15-ը Հայաստանի Հանրապետության առողջապահության, ներքին գործերի նախարարություններին և Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնին գրավոր տրամադրել այն կազմակերպությունների ցանկը, որոնց ներմուծման ծավալները (գումարային շեմը) նախորդ տարում գերազանցել են սույն որոշման 2-րդ կետով սահմանված ծավալները (գումարային շեմ).

2) ռազմավարական պաշարների պահուստի սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանվող դեղերի և բժշկական նշանակության գույքի անվանացանկում ընդգրկված ապրանքներ ներմուծող կազմակերպությունների կողմից սույն որոշման 2-րդ կետով սահմանված ծավալները (գումարային շեմը) գերազանցելու դեպքում, 10 աշխատանքային օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պատշաճ ծանուցել այդ կազմակերպություններին այն մասին, որ վերջիններս հաջորդ հաշվետու ժամանակահատվածում հանդիսանալու են ռազմավարական պաշարների պահուստի դեղերի և բժշկական նշանակության գույքի կուտակում իրականացնող կազմակերպություններ:

6. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 24-ի «Ռազմավարական պաշարների պահուստում ներառվող դեղերի և բժշկական նշանակության գույքի անվանացանկը, կուտակման նորմերը և ժամանակացույցը սահմանելու մասին» N 2144-Ն որոշումը:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 1-ից:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ

Ն. Փաշինյան

Երևան

20.09.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2024 թվականի
սեպտեմբերի 19-ի N 1496-Ն որոշման

Ա Ն Վ Ա Ն Ա Ց Ա Ն Կ

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՊԱՀՈՒՍՏՈՒՄ ՆԵՐԱՌՎՈՂ ԴԵՂԵՐԻ ԵՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԻ

NN ը/կ	ԱՏԳ ԱԱ	Անվանում	Չափման միավոր
		ԱՆԶԳԱՅԱՅՆՈՂՆԵՐ	
		Ընդհանուր անզգայացնողներ	
		Շնչառման դեղեր	
1.	3004	Իզոֆլուրան (հեղուկ շնչառման) 100 մլ	հատ
		Ներարկման դեղեր	
2.	3004	Ֆենտանիլ (լուծույթ ներարկման, 0.005% - 2 մլ)	հատ

3.	3004	Պրոպոֆոլ ն/ե ներարկման, 10 մգ/մլ, 20 մլ	հատ
		Տեղային անզգայացնողներ	
4.	3004	Լիդոկային (լուծույթ ներարկման, 20 մգ/մլ; 100 մգ/մլ; 2 մլ)	հատ
5.	3004	**Պրոկային (Նովոկային) (0.5 % լուծույթ)**	հատ
		Պրեմեդիկացիայի (նախադեղատոգորման) դեղեր	
6.	3004	Ատրոպին (լուծույթ ներարկման, 1 մգ/մլ)	հատ
7.	3004	Մորֆին հիդրոքլորիդ (լուծույթ ներարկման, 10 մգ/մլ -1 մլ)	հատ
8.	3004	Միդազոլամ 15 մգ/3 մլ	հատ
		ՑԱՎԱԶԵՐԾՈՂ, ՏԵՆԴԱՄԱՐԻՉ, ՈՉ ՍՏԵՐՈԻԴԱՅԻՆ ՀԱԿԱԲՈՐԲՈՔԱՅԻՆ, ՀԱԿԱՀՈԴԱՏԱՊԱՅԻՆ ԴԵՂԵՐ, ՌԵՎՄԱՏԱՅԻՆ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ԿԻՐԱՌՎՈՂ ՁԵՎԱՓՈԽԻՉՆԵՐ	
		Ոչ ափիոնային, ցավազերծող, տենդամարիչ, ոչ ստերոիդային, հակաբորբոքային դեղեր	
9.	3004	Դիկլոֆենակ (դեղահատ կամ դեղապատիճ, 25 մգ - 100 մգ, լուծույթ ներարկման, 25 մգ/մլ - 3 մլ)	հատ
10.	3004	Իբուպրոֆեն (դեղահատ, 400 մգ, ներքին ընդունման լուծույթ, 100 մգ/5 մլ)	հատ
		Ափիոնային ցավազերծիչներ	
11.	3004	Մորֆին լուծույթ ներարկման, 10 մգ/մլ, խմելու օշարակ 20 մգ	հատ
12.	3004	Տրամադոլ դեղահատեր, 100 մգ և ներարկման լուծույթ (2 մլ)	հատ
		Ռևմատային բարդությունների ժամանակ կիրառվող ձևափոխիչներ	
13	3004	Սուլֆասալազին (դեղահատ, 500 մգ)	հատ
		ԱԼԵՐԳԻԱՅԻ, ԱՆԱՖԻԼԱՔՍԻԱՅԻ ԺԱՄԱՆԱԿ ԿԻՐԱՌՎՈՂ ԴԵՂԵՐ	
14.	3004	Մեթիլպրեդնիզոլոն 4 մգ, 16 մգ դեղահատ	հատ
15.	3004	Ցետիրիզին կաթիլներ ներքին ընդունման 10 մգ/մլ; 10 մլ	հատ
		ՀԱԿԱԹՈՒՅՆԵՐ ԵՎ ԹՈՒՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ԿԻՐԱՌՎՈՂ ԴԵՂԵՐ	
		Ոչ հատկորոշիչ	
16.	3004	Ակտիվացված ածուխ դեղահատեր	հատ
		Հատկորոշիչ	
17.	3004	Կալցիումի գլյուկոնատ (լուծույթ ներարկման, 100 մգ/մլ, 5 մլ կամ 10 մլ)	հատ
		ՀԱԿԱՎԱՐԱԿԱՅԻՆ ԴԵՂԵՐ	
		Բետա-լակտամային դեղեր	
18.	3004	Ամպիցիլին (դեղափոշի ներարկման լուծույթի, 500 մգ)	հատ
19.	3004	Ամօքսիցիլին+քլավուլանաթթու (դեղահատ, (500 մգ + 125 մգ, դեղահատ 1000 մգ +250 մգ)	հատ
20.	3004	Ամօքսիցիլին+քլավուլանաթթու դեղափոշի ներքին ընդունման լուծույթի (250 մգ+62.5 մգ)/5 մլ)	հատ
21.	3004	Ամօքսիցիլին+քլավուլանաթթու (դեղափոշի ներարկման լուծույթի, 1000 մգ+200 մգ)	հատ
22.	3004	Բենզիլպենիցիլին (դեղափոշի ներարկման լուծույթի, 1 մլն ՄՄ)	հատ
23.	3004	Ցեֆազոլին (դեղափոշի ներարկման լուծույթի, 1 գ)	հատ
		Այլ հակամանրէային դեղեր	
24.	3004	Ազիթրոմիցին (դեղապատիճ կամ դեղահատ 500 մգ, (դեղափոշի ներքին ընդունման լուծույթի, 100 մգ/5 մլ))	հատ
25.	3004	Սուլֆամեթօքսազոլ + տրիմեթոպրիմ (դեղահատ, 800 մգ +160 մգ)	հատ
26.	3004	Ցիպրոֆլօքսացին (դեղահատ, 500 մգ)	հատ
		Բազմադեղակայուն տուբերկուլոզի դեպքում կիրառվող երկրորդային ընտրության դեղեր	
27.	3004	Ամիկացին (ներարկման լուծույթ, 500 մգ/2 մլ) հատ	հատ
		Հակասնկային դեղեր	
28.	3004	Նիստատին (դեղահատ, 500 000 ՄՄ)	հատ

29.	3004	Ֆլյուկոնազոլ (դեղապատիճ, 50 մգ, 150 մգ, լուծույթ ն/ե կաթիլաներարկման 2 մգ)	հատ
		Հակահերպեսային դեղեր	
30.	3004	Ացիկլովիր (դեղահատ, 200 մգ, 400 մգ)	հատ
		ՀԱԿԱՊԱՐԿԻՆՍՈՆԱՅԻՆ ԴԵՂԵՐ	
31.	3004	Լևոդոպա, կարբիդոպա (դեղահատեր, 250 մգ + 25 մգ)	հատ
		ԱՐՅԱՆ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԴԵՂԵՐ	
		Հակասակավարյունային դեղեր	
32.	3004	Երկաթի սուլֆատ, ասկորբինաթթու դեղահատեր, թաղանթապատ 320 մգ + 60 մգ	հատ
		Մակարդելիության վրա ազդող դեղեր	
33.	3004	Հեպարին նատրիում (լուծույթ ներարկման, 5 000 ՄՄ/մլ - 5 մլ)	հատ
34.	3004	Վարֆարին (դեղահատ 2,5 մգ)	հատ
		ՄՐՏԱՆՈԹԱՅԻՆ ԴԵՂԵՐ	
		Հեղձուկամարիչներ	
35.	3004	Նիտրոգլիցերին (դեղահաբ, 0.5 մգ (ենթալեզվային)	հատ
36.	3004	Վերապամիլ (դեղահատ, 80 մգ)	հատ
		Ռիթմակարգավորիչներ	
37.	3004	Մետոպրոլոլ (դեղահատ, 25 մգ)	հատ
		Հակագերճնշումային դեղեր	
38.	3004	Նիֆեդիպին (դանդաղ ձերբազատվող, դեղապատիճ կամ դեղահատ, 10 մգ)	հատ
		Այլընտրանքային	
39.	3004	Բիսոպրոլոլ (դեղահատ, 2,5 մգ)	հատ
40.	3004	Նատրիումի կոֆեին-բենզոատ (20% լուծույթ, 1 մլ)	հատ
		Սրտային անբավարարության ժամանակ կիրառվող դեղեր	
41	3004	Ֆուրոսեմիդ (դեղահատ, 40 մգ)	հատ
42.	3004	Ֆուրոսեմիդ (լուծույթ ներարկման, 10 մգ/մլ)	հատ
		Հակաթրոմբային դեղեր	
43.	3004	Ացետիլսալիցիլաթթու դեղահատ, 75 մգ, 100 մգ	հատ
44.	3004	Կլոպիդոգրել դեղահատ, 75 մգ, 300 մգ	հատ
		ՄԱՇԿԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ԴԵՂԵՐ	
		Հակաբորբոքային դեղեր, քորամարիչներ	
45.	3004	Բետամեթազոն գենտամիցինով (քսուք, նրբաքսուք, 0.1%)	հատ
		ԱՂԵՍՏԱՄՈՔՍԱՅԻՆ ԴԵՂԵՐ	
		Ստամոքսաղիքային դեղեր	
46.	3004	Պանկրեատին (դեղահատ, դեղապատիճ 50 մգ, 125 մգ) հատ	հատ
		Թթվամարիչներ, այլ հակախոցային դեղեր	
47.	3004	Ֆամոտիդին (ներարկման, 20 մգ/մլ)	հատ
48.	3004	Օմեպրազոլ (դեղահաբ, 20 մգ)	հատ
49.	3004	Ալյումինիումի հիդրօքսիդ + մագնեզիումի հիդրօքսիդ (դեղահաբ, 400 մգ + 400 մգ)	հատ
		Հակափսխեցուցիչ դեղեր	
50.	3004	Մետոկլոպրամիդ (լուծույթ ներարկման, 5 մգ/մլ) հատ	հատ
		Հակաջղակծկումային դեղեր	
51.	3004	Դրոտավերին (լուծույթ ներարկման, 2%)	հատ
		ՀՈՐՄՈՆՆԵՐ, ԱՅԼ ՆԵՐՋԱՏԱՅԻՆ ԴԵՂԵՐ	
		Ինսուլիններ, այլ հակաշաքարախտային դեղեր	
52.	3004	Ներարկման ինսուլին (լուծվող) (լուծույթ ներարկման 100 ՄՄ/ մլ) կարճատև	հատ
53.	3004	Ազդեցության միջին տևողությամբ ինսուլին (լուծույթ ներարկման, (ինսուլին ցինկի դեղակախույթ կամ իզոֆան ինսուլին)) 100 ՄՄ/մլ	հատ

54.	3004	Ազդեցության կարճ և միջին տևողությամբ ինսուլին (լուծույթ ներարկման, (միքստարդ ինսուլին)) 100 ՄՄ/մլ	հատ
		Վահանագեղձի հորմոններ, հակաթիրեոիդային դեղեր	
55.		Լևոթիրոքսին (դեղահատ, 50 մկգ)	
56		Թիամազոլ (դեղահատ, 10 մգ)	
		Մկանային ապալարիչներ (ծայրանդամային ազդեցության), խոլինէսթերազի արգելակիչներ	
57.	3004	Պիպեկուրոնիումի բրոմիդ (դեղափոշի ներարկման լուծույթի, 4 մգ)	հատ
58.	3004	Նեոստիգմին (լուծույթ ներարկման 0,5 մգ/մլ)	հատ
		ԱԿՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԴԵՂԵՐ	
		Հակավարակային դեղեր	
59.	3004	Տետրացիկլին (ակնաքսուք, 1%)	հատ
	3004	**Հակաբորբոքային դեղեր**	հատ
60.	3004	Դեքսամեթազոն (լուծույթ (ակնակաթիլներ), 0,1%)	հատ
		Բրաստեղմիչ, հակագլաուկոմային դեղեր	
61.	3004	Թիմոլոլ (լուծույթ (ակնակաթիլներ) 0.5 %)	հատ
		Բբալայնիչներ	
62.	3004	Ցիկլոպենտոլատ ակնակաթիլներ 10 մգ/մլ	հատ
		ԱՐԳԱՆԴԱԿԾԿԻՉՆԵՐ ԵՎ ԱՐԳԱՆԴԱԹՈՒԼԱՅՆՈՂՆԵՐ	
		Արգանդակծկիչներ	
63.	3004	Օքսիտոցին (լուծույթ ներարկման 10 ՄՄ/մլ)	հատ
		ՇՆՉԱՌԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԴԵՂԵՐ	
		Հակաասթմային, թոքերի քրոնիկ խցանիչ հիվանդությունների դեպքում կիրառվող դեղեր	
64	3004	Սալբուտամոլ (շնչառման, 100 մկգ/200 դեղաչափ)	հատ
		ՎԻՐԱԿԱՊԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ /Պարագաներ/Ներարկիչներ/ԲՆԱ	
65.	3005	Թանզիֆ	մետր
66.	3005	Վիրակապ 7x14	հատ
67.	3005	Վիրակապ 5x10	հատ
68.	3005	Բամբակ հիգրոսկոպիկ 100 գ	հատ
69.	3005	Կպչուն սպեղանի 1,25x5	հատ
70.	3005	Կպչուն սպեղանի 2,5x5	հատ
71.	3005	Կպչուն սպեղանի 5x5	հատ
72.	3005	Կրամերի բեկակալներ աստիճանավոր – վերին վերջույթի	հատ
73.	3005	Կրամերի բեկակալներ աստիճանավոր – ստորին վերջույթի	հատ
74.	3005	Բեկակալ - պարանոցային N1	հատ
75.	3005	Բեկակալ - պարանոցային N2	հատ
76.	3005	Բեկակալ - պարանոցային N3	հատ
77.	4015	Ձեռնոց վիրաբուժական ստերիլ 6,5-8,5 չափերի	զույգ
78.	4015	Ձեռնոց վիրաբուժական ոչ ստերիլ նիտրիլ/լատեքս S, M, L, XL	հատ
79.	9018	Նշտար 11,15,23	հատ
80.	6307	Սավան (վիրակապարանի)	հատ
81.	9018	Կատետր ն/ե 14,16,18,20,22,24	հատ
82.	9018	Կենտրոնական կատետր	հատ
83.	9018	Սուկցիոն կատետր/արտածծման տարբեր չափսի	հատ
84.	9018	Կատետր ֆոլի 8,10,12,14,16,18	հատ
85.	9018	Ներարկիչ 1.0 մլ	հատ
86.	9018	Ներարկիչ 2.0 մլ	հատ
87.	9018	Ներարկիչ 5.0 մլ	հատ
88.	9018	Ներարկիչ 10.0 մլ	հատ
89.	9018	Ներարկիչ 20.0 մլ	հատ
90.	9018	Ներարկիչ 50.0 մլ	հատ

91.	9018	Ներարկիչ 60.0 մլ ժանեի	հատ
92.	3004	Միզահավաք 2 լ	հատ
93.	9018	Ն/ե ներարկման համակարգ	հատ
94.	9018	Ն/ե ներարկման համակարգ ֆիլտր	հատ
95.	9018	Պլևրալ /թորակալ/ դրենաժ տրոակարով (20,24,28Fr)	հատ
96.	9018	Պլևրալ /թորակալ/ դրենաժ առանց տրոակարի (20,24,28Fr)	հատ
97.	9018	Պլևրալ դրենաժի համակարգ մեկ դրենաժի համար	հատ
98.	9018	Հեյմլիխի փական	հատ
99.	9018	Կցորդ խցանիչ	հատ
100.	3917	Երկարացուցիչ	հատ
101.	9018	Զարկերակային կատետր	հատ
102.	6307	Լարան արնեկանգ ռետինե կամ փականով	հատ
103.	9018	Ասեղ 21G, 22G	հատ
104.	3917	Եռուղի	հատ
105.	3005	Սպիրտային խծուծ	հատ
106.	8214	Սրվակ կտրիչ	հատ
107.	3005	Թանզիֆե անձեռոցիկ ստերիլ	հատ
108.	9018	ԷՍԳ էլեկտրոդ	հատ
109.	3926	Վիրաբուժական գլխարկ	հատ
110.	6211	Վիրաբուժական խալաթ	հատ
111.	9018	Նազոգաստրոլզոնդ 14,16,18, 20	հատ
112.	9018	Լարինգոսկոպի հավաքածու	հատ
113.	3917	Թթվածնային խողովակ	հատ
114.	9018	Ինտուբացիոն խողովակ 6,5, 7, 7,5,8,8,5	հատ
115.	9018	Ստիլետ ինտուբացիայի	հատ
116.	9018	Օդամուղ տարբեր չափսի	հատ
117.	9020	Թթվածնային դիմակ	հատ
118.	9020	Թթվածնային դիմակ պարկով	հատ
119.	9019	Ամբու հավաքածու	հատ
120.	3926	Արտածծման խողովակ ծայրակալով	հատ
121.	9018	Լրինգիալ դիմակ տարբեր չափսի	հատ
122.	9018	Տրախեոստոմիկ փող 7, 5, 8	հատ

Հայաստանի Հանրապետության
վարչապետի աշխատակազմի
ղեկավար

Ա. Հարությունյան

20.09.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2024 թվականի
սեպտեմբերի 19-ի N 1496-Ն որոշման

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՊԱՀՈՒՍՏՈՒՄ ՆԵՐԱՌՎՈՂ ԴԵՂԵՐԻ ԵՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԻ ԿՈՒՏԱԿՄԱՆ ՆՈՐՄԵՐՆ ՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

1. Սույն որոշման N 1 հավելվածով սահմանված դեղերը և բժշկական նշանակության գույքը տվյալ տարում

կուտակվում են նախորդ տարվա ընթացքում ռազմավարական պաշարների պահուստի անվանացանկում ընդգրկված սույն որոշման 2-րդ կետով սահմանված կազմակերպությունների (այսուհետ՝ կազմակերպություններ) կողմից՝

1) «Նյութական պահուստի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված ռազմավարական պաշարների կուտակման ծավալների համաձայն.

2) Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի կողմից սահմանված դեղերի փոխադրման, պահեստավորման և պահպանման նորմերին համապատասխան՝ ըստ ժամանակացույցի՝

Դեղերի և բժշկական նշանակության գույքի անվանումը	**«Նյութական պահուստի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված ռազմավարական պաշարների կուտակման ժամանակացույց**	
	ապրիլի 15-ի դրությամբ (քանակը)	**սեպտեմբերի 15-ի դրությամբ քանակը)**
N 1 հավելվածով սահմանված դեղեր և բժշկական նշանակության գույք	50%	100%

2. 2025 թվականի ապրիլի 15-ից մինչև սեպտեմբերի 15-ն ընկած ժամանակահատվածում ռազմավարական պաշարների կուտակված նվազագույն քանակ սահմանվում է 50%-ի չափով:

3. 2025 թվականի սեպտեմբերի 15-ից սկսած կազմակերպությունները պետք է պահպանեն սույն որոշման N 1 հավելվածով սահմանված դեղերը և բժշկական նշանակության գույքը մշտապես՝ յուրաքանչյուր տարվա համար 100 տոկոսի չափով:

Հայաստանի Հանրապետության
վարչապետի աշխատակազմի
ղեկավար

Ա. Հարությունյան

20.09.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Պաշտոնական հրապարակման օրը՝ 20 սեպտեմբերի 2024 թվական: